ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Փետրվարի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդների և եպիսկոպոսների ժողով: Մտահոգություն հայտնելով Հայաստանում հետընտրական զարգացումների հետևանքով ստեղծված ներքաղաքական իրավիճակի առիթով՝ Հայ Եկեղեցու առաջնորդներն ուղերձով դիմեցին ժողովրդին:

Ուղերձում ասվում է.

«Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Խորապես մտահոգ և անհանգստացած ենք նախագահական ընտրություններից հետո մեր երկրի ներքաղաքական լարված իրավիճակով:

Հուզումների ալիքները անհանդուրժողության և մեր ժողովրդի զավակների միջև առճակատման սերմեր են պարունակում իրենց մեջ: Ստեղծված իրավիճակը հղի է երկրի ներքին խաղաղությանն ու կայունությանը, մեր պետության վարկին սպառնացող վտանգներով:

Անկախության ճանապարհին մեր ժողովուրդը բազմաթիվ դժվարություններ ու խոչընդոտներ է հաղթահարել՝ հույսով ու հավատով ավելի զորացող տեսնելու իր երկիրը և ոչ՝ բաժանումներից, բախումներից ու ցնցումներից տարուբերվող ու անհաստատ: Պառակտյալ ժողովուրդը դատապարտված է ձախողման իր իղձերի իրականացման մեջ, առաջընթաց ու զարգացած երկիր և հզոր պետականություն հաստատելու իր ձգտումների մեջ, ինչպես մեր Տերը՝ Քրիստոս է ասում. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է» (Մատթ. ԺԲ 25):

Սիրելի հավատավոր հայորդիք, Մեր հորդորն է ձեզ պահպանել ողջամտության ու խոհեմության ոգին, լինել զգոն, օրինապահ, անարձագանք թողնել ատելություն և թշնամանք հրահրող ամեն ձայն, յուրաքանչյուր քայլ կատարել մեր երկրի հեղինակության, մեր ներկայի և ապագայի հանդեպ լուրջ մտահոգությամբ:

Կոչ ենք բերում ընդդիմության ներկայացուցիչներին, ովքեր չեն ընդունում ընտրությունների արդյունքները, գործել օրենքի շրջանակներում, որպեսզի անխաթար մնա մեր երկրի կայունությունը, չվտանգվեն մեր ժողովրդի ձեռքբերումները և կյանքի անդորրը: Հանրահավաքներն ու երթերը բարվոք ճանապարհ չեն վիճարկելու կայացած ընտրությունների վերջնական արդյունքները:

Հայրենի իշխանությանը կոչ ենք անում առավելագույն ջանքեր բերել խաղաղ գործընթացներով լուծման առաջնորդելու հուզող հարցերն ու մարտահրավերները:

Աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ Իր բարի հայացքի ներքո անխոռով պահի մեր երկիրը, անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և խաղաղության մեջ՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն»: